

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԹԱՐԳՄԱՆԶԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արձանագրություն N 2

11 ապրիլի 2013 թվականի,
քաղաք Երևան

ՀՀ արդարադատության նախարարության նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի ապրիլի 11-ի նիստում ուսումնասիրեց և կայացրեց մի շարք որոշումներ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման աշխատանքների կազմակերպման և դիմումների ընդունման վերաբերյալ:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Օրբելյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հակոբյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի

համակարգի իրավական ապահովման վարչության իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Ն. Խալաթյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի

օրինականության վերահսկողության տեսչության նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ

Մ. Սարգսյան - «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ

Է. Աղումյան - ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոնի թարգմանչական բաժնի պետ

2. Մելիքյան - Ժեստերի լեզվի թարգմանիչ

Հանձնաժողովի մյուս 1 անդամ տեղեկացվել է նիստի մասին, բայց նախօրոք ծանուցել մասնակցելու անհնարինության մասին և չի ներկայացել նիստին:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման դիմողների գործերի ուսումնասիրություն՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու տեսակետից:
2. Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման ընթացակարգի հետ կապված հարցեր:
3. Կազմակերպչական այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Օրակարգի առաջին հարցի հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ որակավորման ստուգման համար դիմել է 80 թեկնածու: Բոլոր դիմումները նախնական ուսումնասիրվել են և պատրաստվել է համապատասխան աղյուսակ: Մի շարք դիմումների նախնական ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզեց, որ դրանք չեն համապատասխանում օրենքով առաջադրված պահանջներին: Մինչև վիճահարույց դիմումների քննարկմանն անցնելը, որոշում ընդունվեց ուսումնասիրել մնացած բոլոր դիմումները:

Դիմումները քննվել են հաշվի առնելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 2-ի «Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» N 193 որոշմամբ հաստատված կարգի պահանջները:

Վիճահարույց դիմումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց, որ 4 դիմումատու/Անի Ավագյան, Ռոզա Բալեյան, Վաչագան Ղոթայան, Անուշ Սարգսյան/, չեն ներկայացրել նշյալ կարգով սահմանված բարձրագույն կրթության վկայականների (դիպլոմների) պատճենները: Միևնույն ժամանակ նշված պատճենների չներկայացնելու պատճառը հանդիսացել է բարձրագույն կրթական հաստատությունում ուսման և համապատասխան վկայականի (դիպլոմի) բացակայությունը: Առաջարկվեց նշված դիմումները /թվով չորս/ մերժել: Համապատասխան անձանցից մեկը, այն է Վ. Ղոթայանը ներկայացրել էր, իր պնդմամբ բարձրագույն կրթության վկայականին համարժեք փաստաթուղթ: Հանձնաժողովը, ուսումնասիրելով փաստաթուղթը և հաշվի առնելով վերոգրյալ կարգի պահանջները, փաստաթուղթը համարեց ոչ բավարար և հնարավորություն տվեց դիմողին հինգօրյա ժամկետում ներկայացնել հավելյալ ապացույցներ: Սակայն, Վ. Ղոթայանը հայտնեց, որ նման փաստաթղթի չի տիրապետում, ինչի արդյունքում չընդգրկվեց մասնակիցների ցանկում:

Օրակարգի երկրորդ հարցի հետ կապված Ա. Օրբելյանը առաջարկեց, որպեսզի մասնակցի կողմից արված յուրաքանչյուր էական սխալի դեպքում հանվի 2 միավոր և ոչ էական սխալի դեպքում 0.25 միավոր, ինչպես նախորդ ստուգման ժամանակ, քանի որ տվյալ հաշվարկման համակարգը իրեն արդյունավետ էր դրսևորել:

Օրակարգի երրորդ հարցի հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ տեխնիկական հնարավորությունից ելնելով, միաժամանակ քննություն կարող են հանձնել ոչ ավելի քան քսաներեք մասնակից: Առաջարկվեց, հաշվի առնելով անցած տարվա դրական փորձը խմբերը բաժանել 4 մասի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ մասնակիցներ հանձնելու են 1-ից ավելի լեզու, և նրանց հնարավորություն տալ առնվազն 2 ժամվա ընդմիջման:

Հաշվի առնելով ժեստերի լեզվով դիմումատուների առկայությունը՝ 2. Մելիքյանը առաջարկեց, հիմնվելով Հանձնաժողովի՝ կարգով սահմանված իրավասության վրա, սահմանել տվյալ լեզվի համար տեսաձայնագրման տարբերակը: Այսինք, դիմումատուին տրամադրել տեսանյութ ժեստերի լեզվով, որից նա պետք է կատարի թարգմանությունը, ինչպես նաև ձայնագրել դիմումատուի պատասխան թարգմանությունը՝ իրեն տրամադրված տպագիր տեքստին:

Մ.Սարգսյանը նաև առաջարկեց հաստատել տեքստերը հաջորդ Հանձնաժողովի նիստի ընթացքում, ինչպես նաև վերջինների հնարավոր ճիշտ թարգմանությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման մասնակիցների ցանկը՝ համաձայն հավելվածի, ինչպես նաև խմբերի բաժանման սկզբունքը՝ այբբենական կարգով ըստ ազգանունների (նշված է հավելվածում):
ընդունվեց միաձայն
2. Հաստատել թեկնածուների դիմումների ընդունման մերժումները:
ընդունվեց միաձայն
3. Որոշվեց Վ. Ղոթայանին տրամադրել հինգօրյա ժամկետ՝ հավելյալ ապացույցներ ներկայացնելու համար: Նշված ապացույցները ներկայացնելու դեպքում դիմումը կհամարվեն ընդունված դիմումը ներկայացնելու օրվանից, և հետևաբար նշված անձանց կթույլատրվի մասնակցել որակավորման ստուգմանը:
ընդունվեց միաձայն
4. Հաստատել որակավորման ստուգման թեստավորման փուլի անցկացման վայրը՝ ք. Երևան, Հալաբյան 41ա, 14-րդ հարկ, և ժամը ըստ խմբերի(նշված է հավելվածում):
ընդունվեց միաձայն

5. Դիմորդները ստուգմանը պետք է ներկայանան կից հավելվածով սահմանված օրը և ժամին, միաժամանակ իրենց հետ ունենալով անձը հաստատող համապատասխան փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթուղթ):

ընդունվեց միաձայն

6. Որոշվեց ստուգման համար նախատեսվող տեքստերը հաստատել հաջորդ նիստի ընթացքում:

ընդունվեց միաձայն

Արձանագրությունը կազմված է 5 էջից՝ ներառյալ Հավելվածը:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝

Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

08:45 , ապրիլի 20

անգլերեն

1. Ղահրամանյան Հասմիկ
2. Մարգարյան Սյուզաննա
3. Մարդոյան Մարիաննա
4. Մխիթարյան Ռոզա
5. Պողոսյան Գարիկ
6. Ունջյան Վերոնիկա
7. Քյոսաբաբյան Քրիստինա
8. Աթաբեկյան Նելլի
9. Ալեքսանյան Նարինե
10. Աղաջանյան Անի
11. Այվազյան Արմենուհի
12. Արիսյան Աիդա
13. Գաբրիելյան Նունե
14. Գալստյան Հռիփսիմե
15. Լավյան Վարդուհի
16. Հարությունյան Արուսյակ
17. Հարությունյան Նարինե
18. Հովհաննիսյան Աննա
19. Հովհաննիսյան Եպրաքսիա
20. Ղազարյան Աննա
21. Մաթևոսյան Նելլի
22. Մանուկյան Արփինե

09:15 , ապրիլի 20

ռուսերեն, լեհերեն

1. Ադամյան Ալլա
2. Ալավերդյան Մարինա
3. Անտոնյան Անի
4. Ավազյան Անժելա
5. Արսենյան Արմենուհի
6. Բեկլարյան Սյուզաննա
7. Գևորգյան Դավիթ
8. Ենապիոսյան Ջուլիետա
9. Խաչատրյան Ռուբեն
10. Կարապետյան Մարինա
11. Հարոյան Մարինե
12. Հարությունյան Արինե
13. Հովհաննիսյան Լիլիթ
14. Ղազարյան Հասմիկ
15. Ղուշյան Սոնա
16. Մարտիրոսյան Ինգա
17. Մխիթարյան Ռուզան
18. Մկրտչյան Սոնա
19. Շահինյան Արմինե
20. Եղոյան Մելինե (լեհերեն)

14:45 , ապրիլի 20

անգլերեն, ռուսերեն

1. Ղահրամանյան Հասմիկ (ռուսերեն)
2. Մարգարյան Սյուզաննա (ռուսերեն)
3. Մարդոյան Մարիաննա (ռուսերեն)
4. Մխիթարյան Ռոզա (ռուսերեն)
5. Ունջյան Վերոնիկա (ռուսերեն)
6. Քյոսաբարյան Քրիստինա (ռուսերեն)
7. Սարգիզովա Ասյա (ռուսերեն)
8. Սարգսյան Խանում (ռուսերեն)
9. Միմոնյան Գագիկ (ռուսերեն)
10. Ստեփանյան Հմայակ (ռուսերեն)
11. Վարդանյան Գայանե (ռուսերեն)
12. Տոլսայչյան Մարի (ռուսերեն)
13. Ֆիդանյան Տաթև (ռուսերեն)
14. Մանուկյան Արփինե
15. Մելիքյան Քնարիկ
16. Մկրտչյան Լիլիթ
17. Նազարյան Մարինե
18. Ներսեսյան Լուսինե
19. Նիկողոսյան Օֆելյա
20. Շոլիյան Ջեմմա
21. Չախոյան Լիլիա
22. Պետրոսյան Լիանա
23. Սադիկյան Արմինե

15:15, ապրիլի 20

այլ լեզուներ

1. Աբովյան Գոհար (բուլղարերեն)
2. Աբրահամյան Սուսաննա (գերմաներեն)
3. Ալավերդյան Մարինա (վրացերեն)
4. Առաքելյան Վիկտորյա (լեհերեն)
5. **Արսենյան Կարինե (ժեստերի լեզու)**
6. Բաղումյան Սոնիկ (պարսկերեն)
7. Բարսեղյան Նանա (վրացերեն)
8. Դարբինյան Ասյա (վրացերեն)
9. Եղոյան Մելինե (հոլանդերեն)
10. Համբարձումյան Վիլենա (գերմաներեն)
11. Հեպոյան Լուսինե (ֆրանսերեն)
12. Հովհաննիսյան Ալվինա (երբայերեն)
13. Հովհաննիսյան Հայկ (ֆրանսերեն)
14. Ղազարյան Գոհար (պարսկերեն)
15. Ղազարյան Վահագն (պարսկերեն)
16. Մելքոնյան Վահան (գերմաներեն)
17. Մկրտչյան Անահիտ (պարսկերեն)
18. Նասիբյան Սոնա (ֆրանսերեն)
19. Չատիլյան Ալվարդ (ֆրանսերեն)
20. Պողոսյան Գարիկ (իսպաներեն)
21. Սայեդեհ Ֆաթեմի (պարսկերեն)

22. Սորու՛՛ Մեհրադ (պարսկերեն)